Երբ հասանք գիւղը, Մուրադը խնդրեց ցոյց տալ ռեսի (տանուտէրի) տունը: Մի քանի երեխաներ, մրցելով միմեանց հետ, թէ որը շուտով կը կատարէ այդ ծառայութիւնը, առաջ վազեցին:

Մենք գտանք ռեսին. Դաւիթ մարգարե-թագաւորի նման, նստած էր իր տան կտուրի վրայ: Նրա մօտ էր եւ շինական քահանան. Մի խումբ այլ մարդիկ եւս շրջապատել էին նրանց. ալեւորները նստած էին, երիտասարդները յարգանքով կանգնած էին ոտքի վրայ: Խօսում էին շինական զանազան հարցերի մասին: Ինչպէս երեւում էր, այդ կտուրը ռեսի բացօթեայ դատարանն էր, որտեղ քահանայի եւ գիւղի ալեւորների խորհրդով վճռւում էին զանազան վէճեր: Դատը կատարւում էր հրապարակաւ: Մասնակցում էին եւ հասարակութեան ներկայացուցիչները: Երկու ծայրեր շօշափում էին միմեանց՝ պարզ նահապետական դատավարութեան եւ կատարելագործած ռամկապետական դատավարութեան ծայրերը:

Երբ մեզ տեսան, խօսակցութիւնը դադարեցրին: Ռեսը ոտքի ելաւ եւ, ողջունելով մեզ, խնդրեց նստել: Բայց երբ նկատեց, որ մենք անշարժ մնացինք, կարծես մի բան մտաբերելով, դարձաւ դէպի իր մօտ եղողներից մէկը, ասելով.

— Ինչպէս երեւում է, այդ մարդիկ մեզ նման գետնի վրայ նստելու սովոր չեն, գնայ ասա, որ մի շոր բերեն, ձգեն այստեղ:

Եւ իրաւ, նրանք մերկ կտուրի վրայ էին նստած, բայց այդ կտուրը, ռեսի ժրաջան հարսների շնորհիւ, այնքան մաքուր էր, որ փոշու մի հիւլէ անգամ անկարելի էր գտնել այնտեղ:

Շուտով մի խումբ կանայք մեզ մօտ վազեցին. մէկը շտապով սկսեց ջրով սրսկել կտուրը, միւսը աւելում էր, երրորդը տարածում էր ծանր օթոցները, իսկ չորրորդը երեւի, նոր էր մտածում, թէ ինքը ինչո՞ւ համար եկաւ եւ կանգնած, շփոթած նայում էր իր շուրջը: Յետոյ նա էլ իր համար գործ գտաւ, լուռ մօտեցաւ Ասլանին, ձեռքով հասկացրեց, որ թոյլ տայ կօշիկները հանել:

— Նեղութիւն մի կրէք, — հրաժարուեցաւ Ասլանը, — իմ կօշիկները դժուարութեամբ են հանւում:

Պատասխանը կարծես վիրաւորեց կնոջ ինքնասիրութիւնը, մի հեգնական ժպիտ երեւաց նրա կարմիր թշերի վրայ եւ, առանց Ասլանի թոյլտուութեանը սպասելու, բռնեց նրա երկարավիզ կօշիկներից եւ ուժեղ ձեռքով այնպէս դուրս քաշեց, փոքր էր մնում, որ ոտքն էլ հետը տանէ: